

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԻԱՆԴՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՄԵՐ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ.

I

Գլխիվայր հասկացողութիւնները կուտուրական նոր շրջան թեւակոխ հասարակութեան յատկանիշներն են. հնից դժգոհ, նորը չմարտած հասարակութիւնը ծայրահեղութեան տենդով վարակուած իր կեանքի տնօրինումը վէրքեր բանող նորութիւններով է հարստացնում:

Մեր խոցոտ մարմնի վէրքերը ոչ միայն օտարների պողովատի, արքշիռ կրքի արդիւնք են, այլ և մեր գլխիվայր հասկացողութիւնների, որոնցով շատ ենք հարուստ, որոնց մասին շատ է գրուել: Այդ հասկացողութիւնների մէջ այս անգամ ուշադրութեան եմ ուղղում առնել մի, տարիներից ի վեր մատնանշուած, անպատուարիւր դրութիւն, որը ամենից պարզ ցոյց է տալիս մեր ինքնագիտակցութեան չափը:

Հազարաւոր տարիների անցեալով աջ ու ձախ պարծենում ենք, եւրոպական մամուլում մեր նախնիքների առաքինութիւններն ենք յիշատակում, դպրոցի, մամուլի անունից ենք ճառում և Կովկասահայ, գրականագէտներով, պատմաբաններով հարուստ կենդրոն Տփլիսում օտարն է մեզ մեր պատմութիւնը սովորեցնում. մեր, 15—20 տարի շարունակ պատմութեամբ զբաղուող պատմաբանին մոռանում են ոչ միայն չեն դիմում, որ խօսէ, այլ և եթէ խօսէ անգամ հաւանաբար չեն գնայ լսելու: Չքաշուենք, ասենք պարզ, որ մեր պատմութիւնը մեզ օտարներն են սովորեցրել, օտարներն են ուսումնասիրել և մենք այնքան էլ շնորհք չենք ունեցել, որ կարողանանք օտարների գրուածները թարգմանել, ի մի հաւաքել հրատարակել:

Եթէ ազգի բախտի տէր տնօրէնները, մեր ազգի անունից ճառողները, բայց իրենց գոված նախնիքներին անձանօթները այդքան գիտեն Հայոց պատմութիւնը, ինչ պիտի պահանջենք գաւառի, ինչ որ ձորում տեղաւորուած, ձմեռն աշխարհից կտրուած, գիւղի դպրոցի դասատուից, որի վրայ պարտք կայ գրուած, հա-

մաձայն ծրագրի, աւանդել Հայոց պատմութիւնը, իրաւունք չունինք պահանջելու, պահանջող էլ չկայ և XX-րդ դարում քաղաքական կնճռոտ հարցերը առաջնորդողի նիւթ դարձնող, հայ ազգի համար արշալոյս, արեւ ու փրկութիւն կոահող անպորտֆէյլ դիպլոմատները չզիտեն անգամ, որ իրենց պաշտպանած ժողովրդի դպրոցներում, իրենց ողբերգութիւններին առատ նիւթ մատակարարող Հայոց պատմութիւնը ի՞նչ դրութեան մէջ է, կա՞յ, չկա՞յ, ի՞նչպէս է աւանդւում և այլն:

Գլխիվայր, այն էլ խիստ ամօթաբեր, հասկացողութիւն չէ, որ հայ ազգի պատմութիւնն ենք վկայ բերում մեր կուլտուրականութեան, իրաւունքի և այդ պատմութեանն անձանօթ ենք մեծից մինչ փոքրը, տգէտից մինչև գրագէտը: 80—100 տարի անցեալով դպրոցներ ունեցող Կովկասահայր դեռ այժմ էլ իր մեծամասնութեամբ իր պատմութեանն անձանօթ է, այդ դեռ ոչինչ, իր դպրոցներում աւանդուող Հ. պատմութեան համար ոչ կանոնաւոր ծրագիր ունի, ոչ յարմար դասագիրք, ոչ էլ միջոցներ է մշակում այդ պակասների առաջն առնելու:

Եթէ մեր ամենատեսակ աստիճաններով հարուստ մտաւորականները իրաւունք ունին Հ. պատմութիւնից ճառելու և իրենց ճառի աղբիւրները հայ մամուլը դարձնել, իսկ մեր ձեռագրերը, մատենագրերը Եւրոպացի գիտնականներին թողնել, ապա առնուազն դպրոցական աշխարհում բոլոր գործողները պէտք է, դպրոցների հետ անմիջական կապ ունենալու, կրթուող սերնդի առաջ պատասխանատու լինելու պատճառով Հ. պատմութեամբ լրջօրէն զբաղուեն: Սակայն մեր հասարակական գործերին տօն տուող գործիչների օրինակը սրանց համար նմանողութեան լաւ միջոցն է եղել, իսկ իրենք էլ իրենց կողմից աւելացրել են և այն նոր գլխիվայր հասկացողութիւնը, թէ ծխական դպրոցները տարրական են:

Դպրոցի տարրական անունը մեր, ծրագիր կազմող, կանոդրութիւն մշակող, գեկավար մանկավարժների մէջ հեշտ, թեթեւ, պարզ հասկացողութեանն է հաւասար, ուստի և տարրական դպրոցում ամեն առարկայ հեշտ է աւանդել, ամեն գրագէտի է մատչելի: Եւ ի՞նչ է դուրս եկել, որ տարրական դպրոցում Հ. պատմութիւնը աւանդում է ամեն ուսուցիչ, ամեն տեսակ դասագրքով և որովհետեւ վերահսկողութիւնն էլ պակասում է, ամեն տեսակ ժամերի և նիւթերի դասաւորութեամբ: Բայց այդ տարրական անունն պատճառով «տարրական» ուշադրութեան արժանացած դպրոցում չէ միայն Հ. պատմութիւնը իր ժողովրդի նման նահատակուած, նոյնը նաև միջնակարգ դպրոցներում է, այսքանը յիշեմ, որ 25 տարի առաջ կազմուած Ստ. Պալասանեանի Հ. պատմութեան դասագիրքն

է դեռ միջնակարգ դպրոցների աշակերտութեան ձեռքը տրուած, իսկ այդ դասագրքի բազմաթիւ թերութիւնների դէմ ամեն տարի են բողոքում, հաւասարապէս թէ դասատուները, թէ աշակերտները:

Հարցը ոչ միայն բաւական անցեալ ունի, այլ և հասունացել, գուցէ փթելու աստիճանին է հասել և այս վերջին հանգամանքն է մտահոգութեան առարկան: Պատերազմի հետ անմիջական կապ չունեցող, բայց ոչ պակաս անյետաձգելի մի շարք հարցերը անուշադրութեան առնելու արդարացի միակ պատճառը ժամանակակից ձախորդ պայմաններն են համարում: Բայց եթէ ժամանակ ունինք թատրոն գնալու, ցերեկոյթ, երեկոյթ կազմակերպելու, դասախօսութիւններ լսելու ինչո՞ւ ժամանակ չպիտի ունենանք մեր բնաւէր ժողովրդի պատմութիւնն աւանդելու հարցով զբաղուելու. դժուար թէ զանազան պիէսներ տեսնելը, բանկէտներ կազմակերպելը պատերազմի հետ այնքան առնչութիւն ունենան, որքան Հ. պատմութեան դասաւանդման կանոնաւորումը մեզ համար:

Ինչո՞ւ այժմ դպրոց բանալ, դաս տալ հնարաւոր է, իսկ այս հարցին, որ նոյն դպրոցի կանոնաւորման հետ սերտ կապուած է մի 5—10 օր չենք կարող նուիրել: Ինչո՞ւ լուսաւորութեան նախարարութիւնից դպրոցների համար շարունակ հրահանգներ են լինում. իսկ մեր դպրոցական իշխանութիւնները մոռացութեան են տուել մեր հրազած ապագայի հիմնաքարեր պատրաստող ուսումնարանները: Չմոռանանք, որ պատերազմում յաղթւում է այն ժողովուրդը, որը գլուխը կորցնում է անակնկալների առաջ:

II

Հասարակական կեանքի յառաջիդիմութեան ազդակներից մէկի՝ դպրոցի կանոնաւորման հարցը համեմատաբար աւելի ուշ քննութեան առարկայ դարձաւ հարցեր ծնող և վճող Եւրոպայում: XIX-րդ դարու վերջին տասնամեակները յատկապէս մանկավարժական գիտութեան հսկայական քայլերով յառաջադիմելու նշանակալից տարիներն են: Ամերիկան այս անգամ ուժեղ մրցակից եղաւ Եւրոպային և որոշ խնդիրներում առաջնութեան պատիւը խլեց:

Ըստ սովորականին Եւրոպայից նորութիւնները մինչև լայնածաւալ Ռուսաստան հասան բաւական ժամանակ անցաւ. այժմ արդէն Ռուսաստանում ևս դպրոցների կանոնաւորման հարցը հրատապներից է, իսկ մե՞նք երբ երբորդ ձեռքից կառնենք այդ նորութիւնները, կօգտուենք դրանցից դեռ յայտնի չէ. արեւելցու անունն ի զուր չենք կրում. դանդաղութիւնը մեր անբաժան ընկերն է:

Ռուսական դպրոցները կրկնակի բարեփոխութիւնների են ենթարկուած. նախ դպրոցների տիպերն են փոխուած, ծրագրերը, աւանդուող առարկաները, դասընթացքների տևողութիւնները կանոնաւորուած, երկրորդ առարկաների դասաւանդման նիւթի և մեթոդի ուժեղ վերաքննութիւններն են առաջ տանուած. աշխատուած են նոր գիւնին հին տկի մէջ չլցնել:

Մեզանում գուցէ դպրոցների տիպերի, դասընթացքների փոփոխութեան հարցն այժմ անկարելի է քննութեան առնել յայտնի պատճառներով, բայց աւանդուող առարկաների նիւթի և մեթոդի բարեփոխութեան կարիքը վաղուց է զգացուած և մեր առաջ այնքան դժուարութիւն չկայ այդ հարցով զբաղուելու հէնց այն պատճառով, որ այս դէպքում ևս մենք մեր զարգացած դրացիներից մշակուած, պատրաստի ահագին նիւթ կարող ենք վերցնել, մեր պայմաններին յարմարեցնել, կրճատել աւելորդը, աւելացնել անհրաժեշտը: Ռուսական դպրոցներում ազգային պատմութեան դասաւանդման համար բաւական ձեռնարկներ, մեթոդիկաներ, ուղեցոյցներ կան, թէ դասատուի, թէ աշակերտի համար: Ռուսաց տարրական դպրոցներում ազգային պատմութեան դասաւանդումը աւելի քան լուրջ քննութիւնների առարկայ է դարձել և տարբեր հոսանքների ծնունդ տուել: Թէ համագումարներում, թէ առանձին աշխատութիւններում ազգային պատմութեան դասաւանդութեամբ զբաղողները բաւականաչափ մշակել են այդ առարկայի նիւթն ու մեթոդը, ցոյց են տուել օժանդակ միջոցներ, կազմել են նիւթերի ցուցակներ և այլն, որոնցից և օգտուում եմ առաջադրածս հարցի պարզաբանութեան համար: *)

III

Ազգային պատմութեան նիւթն ու աւանդման նպատակն ամենից առաջ տարրական դպրոցի նպատակով է պայմանաւորուած. միւս առարկաների նման ազգային պատմութիւնն էլ այն միջոցներից մէկն է, որոնցով տարրական դպրոցն աշխատում է իւր մէջ կրթուող երեխաներին հասցնել իր առաջադրած նպատակին: Մանկան հոգեբանութեան ուսումնասիրութիւնը, մանկավարժական գիտութեան նոր տուեալները տարրական դպրոցի նպատակ համարում են երեխայի հոգեկան ոյժերը հետզհետէ երե-

*) Յայտարարում տեսած այդ աշխատութիւնների մէջ ամենից շահեկանը եւ յանձնարարելին է. В. Я. Улановъ—Опытъ Методики исторіи въ начальной школѣ, աշխատութիւնը. 1844 թ. 4 ռ. որից եւ մեծ չափով օգտուում եմ:

խայի իր իսկ ոյժերով, դասատուի աջակցութեամբ զարգացնելը: Այս նպատակին հասնելու համար դպրոցում աւանդում են այնպիսի գիտելիքներ, որոնց իւրացնելով երեխան աստիճանաբար ծանօթանում է իւր շրջապատի հետ, զարգացնում է դիտողութիւնը, կամաց կամաց պատրաստւում է մարդ-քաղաքացի-ազգի անդամ լինելու: Երեք գաղափարները համերաշխ զարգանալով նրան դարձնում են անհատ, իր ոյժերը գիտակցող, իր շրջապատը ճանաչող, իր՝ ազգի անդամ լինելը ըմբռնող:

Վերջին նպատակից բղխում է ազգային պատմութեան դասաւանդման անհրաժեշտութիւնը դպրոցներում: Այս առարկայի շնորհիւ է, որ երեխան ծանօթանում է իր ինչ ազգի անդամ լինելու, ինչ պարտք ու իրաւունք ունենալու հարցերի հետ: Ամեն առարկայ ուրոյն նպատակի չէ դիմում միայն. բոլոր առարկաներն էլ միմեանց լրացնում են. այնպէս որ միայն ազգային պատմութեամբ չէ, որ երեխան վերոյիշեալ հարցերը լուծելու է. միայն ազգային պատմութիւնը միւս առարկաներից աւելի անմիջական ու լրիւ է լուծում հարցերը:

Այժմ էլ դեռ այն սխալ հասկացողութիւնն է իշխում դպրոցական աշխարհում, թէ ազգային պատմութեան դասաւանդումով աշակերտը նեղ սիրտ է դառնում, իր ազգից դուրս մնացածներին չէ ուզում ճանաչել: Սակայն իւրաքանչիւր ազգի պատմութեան մէջ միշտ երևան են գալիս և դրացի ազգերը, յաճախ աւելի լաւ կուլտուրայով, իրենց ազդեցութիւններով. դասատուին է մնում այս առատ նիւթը օգտագործել աշակերտի մէջ առողջ ազգասիրութիւն, մարդասիրութիւն զարգացնելու: Միջանկեալ նկատեմ, որ մեզանում ոչ թէ նեղ ազգասիրութիւն չեն զարգացնում, այլ ոչ մի զգացում չեն զարգացնում, կամ աւելի յաճախ աղաւաղում եղածը:

Ազգային պատմութիւնը մարդ-քաղաքացի գաղափարներին ներհակ չէ, այլ աւելի շուտ անհրաժեշտ լրացնող տարր:

Պատմագիտութիւնը վազուց է փոխել պատմութեան նիւթն ու մեթոդը. նախկին ժամանակագրութեան ու հերոսների գործերի նկարագրութեան փոխարէն այժմ մարդկութեան, հասարակութեան զարգացման ուղին հասկանալ բացատրելն է դարձրել իր նպատակը: Այս փոփոխութիւնն անշուշտ անդրադառնում է նաև դպրոցներում աւանդուող պատմութեան վրայ: Դիւցազների ախրագործութիւններով աշակերտներին բարոյախօսութիւն կարգալը, հրաշք-առասպելներ պատմելով նրա երևակայութիւնը վառելը, թուեր սնդիր անել տալով նրա յիշողութիւնը զարգացնելը այլ ևս պատմութեան նպատակը չէ: Ուլանովն այսպէս է բնորոշում պատմութեան դասաւանդման նպատակը դպրոցներում

«Առանձին ժողովուրդների և մարդկութեան կեանքի զարգացման բացատրութիւնը, ժամանակակիցը հասկանալու պատմութեան դասաւանդման նպատակն է բոլոր տիպի դպրոցների համար, սկսած բարձրագոյնից և վերջացրած տարրականով» (31 եր.): Սակայն այս որոշումը 12—14 տարեկան երեխաների համար շատ է ծանր. ժողովուրդ, մարդկութիւն, զարգացում գաղափարները աւելի քան բարդ են. պահանջում են բաւական պաշար, զարգացում, որից շատ է գուրկ տարրական դպրոցի Գ.—Դ. բաժանմունքների երեխաները:

Այս դժուարութեան առաջն առնուով է նրանով, որ միւս առարկաների նման, պատմութեան նիւթը տարրականացւում, մեթոդը առարկայացնւում է. այս դէպքում առարկայի նիւթը յարմարեցւում է երեխայի մտաւորին և ոչ ընդհակառակը, ինչպէս այդ լինում է բարձրագոյն դպրոցներում:

Քանի որ մանուկը պատկերներով է մտածում, շնչաւորում է ամեն բան և նրա մէջ գերակշռողը երեւակայութիւնն է ուստի պատմութիւնն էլ ինչպէս Ուրանոյն է ասում, կօմպրմիսի է դիմում. գուտ գիտական պատճառ հետեանքի պահանջի փոխարէն դիմելու է Հոմերական ոճին—առարկայացնելու շնչաւորելու ամեն ինչ. հեղինակն ասում է, որ առարկայի գիտականութիւնը տուժելու է աշակերտի հասակի յատկութեան պատճառով (42 եր.) այս կօմպրմիսը հեղինակը թոյլատրելի է համարում: Սակայն լաւ պիտի յիշել, որ ընդհանրապէս կօմպրօմիսը թեք տարածութիւն է, որի վրայ կանգնողը մինչև ցած սահելը, սկզբնական կէտից շատ հեռանալը հեշտութեամբ հնարաւոր է: Այս վտանգի առաջն առնողները լաւ ձեռնարկն ու լուրջ պատրաստուած դասատուն են, որոնք դժբախտաբար մեղանում բացակայում են:

Դասատունը բուն նպատակից հեռանալու համար պէտք է յիշէ ազգային պատմութեան նպատակը. որն ըստ Ուլանովի (36—7 եր.) է 1) պատմութիւն աւանդելով երեխաների մէջ առաջ բերել գիտակցական սէր դէպի հայրենիքը, 2) երեխաների մէջ զարգացնել ցանկութիւն և կարողութիւն պատմել մի բան ազատ և կապակցուած, 3) երեխաների մէջ պատմական ընթերցանուլի թեամբ ինքնուրոյն պարապելու ճաշակ զարգացնել: Հաւանօրէն հեղինակը մոռացել է մի անգամ էլ շեշտելու իր առաջներում յիշուած այն կէտը, թէ 4) հասկանալ շրջապատը: Այս չորս կէտերին պէտք է բաւարարեն թէ դասատուն, թէ դասագրքի նիւթը, թէ ծրագիրը:

Ամենից առաջ պէտք է պատմական նիւթի խիստ ընտրութիւն լինի. պատմութեան նիւթը պարզ ու բարդ, վատ ու լաւ,

հեշտ ու գծուար տուեալների մի իւրատեսակ ժողովածու է. բնական է, որ այս ամենը 12—14 տարեկան երեխային չի կարելի տալ. դասագիրք կազմողը, դասատուն պէտք է մեծ հմտութեամբ համապատասխան նիւթերն ընտրեն, ամբողջութիւնը չխախտելով, էականն ու երեխայի պատրաստութեանը մատչելին քաղեն, ներդաշնակօրէն կապակցեն: Ոստենք օրինակով. հայերի ծագման հարցը, խալդ ցեղերի պատմութիւնը, նախարարական կազմակերպութիւնները իրենց իրաւունքներով և յարաբերութիւններով, մեր երկրի իւրատեսակ աւատական դրութիւնը, եկեղեցու և պետութեան յարաբերութիւնը և այլն այնքան բարդ ու որ գլխաւորն է չլուսաբանուած հարցեր են, որոնք տարրական դպրոցի դասագրքի նիւթ չեն կարող դառնալ: Ամենից փափուկ հարցը պատմական երևոյթի պատճառ հետեանքի խնդիրն է, որը տարրական դպրոցում ամբողջութեամբ բացատրել դժուար է. աւելացնենք, որ ինչպէս Միլիւկովն է նկատում «Գիտութեան տեսակէտից գլխաւոր, անհրաժեշտ և պատահական, երկրորդական պատճառներ չկան» *) աւելացնենք և Վիպլէրի խօսքը, որ պատմութեան մէջ «Պէտք է զգուշանալ, որ մեր նկարագրուածի կարգը չընդունենք իրականութեան երևոյթների կարգ» **). այսինքն չենթադրենք, թէ ինչ որ պատմութեան մէջ նկարագրուում է յաջորդաբար, այն նոյնը իրականութեան մէջ է եղել. իրական կեանքը երբէք իր ամբողջութեամբ ոչ մի գիտութեան չի ենթարկւում: Տեսնում ենք, որ լուրջ պատմագիտութիւնն իսկ ընդունում է, որ իրականութեան մէջ պատահած երևոյթներից ընտրութեամբ է պատմութեան նիւթ քաղւում. առաւել ևս դասագիրք կազմողը պէտք է աշակուրջ լինի իր գործը կատարելիս:

Յիշենք և մի քանի, անցեալից մնացած, պատմութեան դասաւանդման նպատակներ, որոնք այժմ պատմագիտութեան կողմից անընդունելի են ճանաչուած. 1) Պատմութիւնը դպրոցում բարոյախօսական նպատակ ունի: Առաջնորդում հերոսների կեանքը, սխրագործութիւնները նկարագրելով աշխատում էին աշակերտի մէջ բարոյականութեան սաղմեր ցանել. պատմութիւնը հերոսների կենսագրութիւն էր դառնում. բայց չմոռանանք, ինչպէս Ուլանովն է ասում (34 եր.) որ պատմութիւնը բարոյախօսութեան համար շատ խախտում հող է. որ Պլուտարքոսի ժամանակի պատմագիտութիւնն այժմ անընդունելի է: Պատմութեան մէջ կան հերոսներ, որոնք բռնակալներ, դահիճներ են եղել և կոպիտ ոյժի շնորհիւ անմահացել են, բայց մեր ժամանակի հասկացողութեամբ

*) Ուլանով 47 եր.

**) ibid.

օրինակ լինել չեն կարող. պատմութեան բարոյականութիւնը, մեր հասարակական-քրիստոնէական բարոյականութեան հետ քիչ առընչութիւն ունի: Յիշենք մեր ժամանակը. պատմութեան հերոսը նա է համարւում, ով ամենից ամուր ջղերն ունի, ամենից աւելի սարսափներ կատարած է. իսկ մեր բարոյականութիւնը զգայուն ջղեր է պահանջում:

2) Պատմութեան միջոցով աշխատում են աշակերտի յիշողութիւնը զարգացնել. պատմութիւնը յուշամարգութեան միջոց է համարւում. այն էլ մեքենայական ձևով. նման միջնադարից աւանդած մնացած տրամաբանական 64 հաւաքաբանութիւնները ճիշտ յիշելու «Barbara և այլն» բարբարոս միջոցի: Դեռ մինչև այժմ էլ շատ դասատուներ պահանջում են աշակերտից Հայկազեան, Արշակունեաց և այլ տոհմերի թագաւորների անուններն ու թուականները կարգով սկզբից մինչև վերջը, երբեմն էլ վերջից մինչև սկիզբ ասելը և գիտեցող աշակերտին բաւարար թուանշան են դնում, ազգային պատմութիւնը «լաւ» իմանալուն համար. հետևանքը այդ մեթոդի շատ է պարզ: 3) Պատմութիւնը աշխատում են մեծ մարդկանց կենսագրականներ դարձնել. այն մտքով, որ մեծ մարդկանց կեանքը ուսանելի, խրատական է: Նախ մեծ մարդ գաղափարը տեսանք, որ առաձգական է. երկրորդ՝ մեծ մարդկանց կեանքը գրողները աշակերտի համար աւելորդ մանրամասութիւնների մէջ են ընկնում, երրորդ՝ պատմութիւնը դառնում է հերոս—մեծ մարդկանց աշխարհը, ուր ժողովուրդը, հասարակութիւնը գոյութիւն չի ունենում. իսկ մեր ժամանակում անհատի և հասարակութեան փոխյարաբերութիւնը շատ է պարզ, որ այդ մասին աւելի խօսենք:

Աւելի ևս ուշադրութեան պիտի առնել պատմութեան համար երկու անհրաժեշտ գաղափարներ՝ ժամանակի և տարածութեան: Երկու գաղափարներն էլ հաւասարապէս դժուար ըմբռնելի են երեխաների համար. երեխան ոչ կարողանում է պատկերացնել իրենից առաջ եղած 100—1000 և այլն տարիների ժամանակամիջոցը և ոչ էլ Եգիպտոսի, Պարսկաստանի, Ասորեստանի, Հռոմի մեր երկրից ինչքան հեռու լինելը, մանաւանդ որ մեր գաւառների երեխաները գրեթէ իրենց ապրած տեղից չեն հեռացել և տարածութեան մասին շատ սահմանափակ գաղափար ունին: Կրօնի դասատուութեան հարցը պարզաբանելու համար երեք տարի փորձեր եմ արել դանազան դպրոցներում ժամանակի և տարածութեան գաղափարը պարզելու համար. գրեթէ բոլորն երեխաներն էլ թիւ ու անուն են ասում առանց որոշ գաղափար ունենալու: Հարցրել եմ օրինակ ա—գ. բաժանմունքների (8—12 տ.) երեխաների մեզանից քանի տարի առաջ էր ապրում Քրիստոս, Մովսէս,

Սաւուղ և այլն. նրանց համար միեւնոյն է ժամանակի տեսակէտից Սաւուղը, Արրահամը, Քրիստոս և պատասխանում են. 4, 25, 100, 1000 տարի առաջ և 4 տարու գաղափարը նրանց համար 1000 տարուն հաւասար է. դէպքեր են պատահել, որ ասել են Քրիստոս Քրիստոսից առաջ է ապրել. կամ այժմ էլ երուսաղէմում ապրում է: Առհասարակ Քրիստոսից առաջ, յետ ժամանակաշրջանները երեխաների համար անհասկանալի են: Հարցնում եմ—մեզանից ի՞նչքան վերստ, քանի՞ օրուայ, ժամուայ ճանապարհ հեռու կլինի եգիպտոսը, Պաղէստինը, Միջագետքը—պատասխանում են՝ մեր գիւղի էն կողմն է կամ 10—25 վերստ հեռու է, կամ 4—10, ժամուայ ճամբայ է: Միջանկեալ նկատեմ, որ շատ երեխաների համար Արրահամը, Քրիստոսը, Մովսէսը հայեր են. ազգերի տարբերութիւնը չգիտեն. նրանց կարծիքով հաւանօրէն հայ դպրոցում միայն հայերի պատմութիւնն են անցնում. ում մասին, որ սովորում են հայ է:

Այս օրինակ հետազօտութիւն անշուշտ շատ դասատուներ արած կլինին և հաւանօրէն մօտաւորապէս նման պատասխաններ ստացած. այս հանգամանքները պէտք է դասատուին, դասագիրք կազմողին դրդեն պատմութեան նիւթն ընտրելիս զգոյշ լինել, չմոռանալ ի՞նչ հասակի և ի՞նչ միջավայրի երեխաների համար են ընտրում:

Պատմութեան նիւթի ընտրութեան և քանակի հարցերը պայմանաւորուած են նաև պատմութեան դասաւանդումը ի՞նչ դասարանից սկսելու, ի՞նչում վերջացնելու և շարաթական քանի՞ ժամ յատկացնելու խնդիրներով: Մեր դպրոցների ծրագրով գ—դ. բաժանմունքներում է աւանդելու. և որովհետև մեծ մասամբ մեր դպրոցները երեք բաժանմունք ունեցողներ են, ուստի և պատմութեան նախնական շրջանը՝ նախապատմական մասն սկսում են ու վերջացնում. բնական է, որ պատմութիւնը նրանց համար անօգուտ մի առարկայ է դառնում. կան դպրոցներ չորս բաժանմունք ունեցողներ. սրանցում միայն նախապատրաստական շրջանի վրայ աւելանում է հատուկ ուսուցիչ տեղեկութիւններ Տիգրան Մեծի, Տրդատի մասին. դարձեալ ոչ մի ամբողջութիւն. մի երկու տասնեակ երկդասեան (ա—ե. բաժ.) ունեցող դպրոցներ ունինք. սրանցում էլ ըստ ծրագրի ե. բաժ. ից պիտի նորից սկսել պատմութիւնը իբր թէ աւելի ընդարձակ անցնելու և ահա ե. բաժ. աւարտող աշակերտը առ առաւելն հասնում է մինչև Բագրատունիք և կիսատ թողնում հեռանում: Սի երկու հատ երեք դասեան (ա—դ. բաժ.) դպրոցներ կան, որոնց մէջ ըստ ծրագրի երեխան իբր թէ լրիւ անցնում է Հ. պատմութիւնը:

Ծրագիր կազմողները ի նկատի չեն ունեցել մեր իրական-

նութիւնը, թէ ի՞նչ տիպի դպրոցներ ունինք, որոնք են գերակշռողը, ուստի և պատմութեան առարկան գրեթէ բոլոր ծխական դպրոցներում ոչ միայն կանոնաւոր չի աւանդուում, այլ և կիսատ է մնում և աշակերտը դպրոցից հեռանում է առանց որոշ գաղափարի:

Խնդրի լուծում տուողը պիտի լինի պատմութեան դասական դման նպատակը և ոչ մեր ցանկութիւնը. ուզում ենք որ մեր երեխաները ծանօթանան իրենց անցեալի հետ, բայց ի՞նչ ձևով, ռիտիկ, այս հարցերը մոռանում ենք: Պատմութիւնը համեմատաբար աւելի բարդ խնդիրներ ունի իր մէջ, քան միւս առարկաները. պատմութիւնը պէտք է աշխատէ աշակերտին աստիճանաբար ծանօթացնէ իր շրջապատի, հասարակական կազմի, երևոյթների դարգացման հետ. այդ հնարաւոր է որոշ չափով ի հարկէ 13—14 տարեկան երեխայի համար, երբ նա առնուազն 4 տարի դպրոցում սովորել է, ժամանակի, տարածութեան գաղափարների հետ թուաբանութեան, աշխարհագրութեան, հայրենագիտութեան դասերին ծանօթացել է, բնագիտութիւնից սովորել է երևոյթի պատճառ, հետևանք ունենալը, լեզուի դասերին բառերի պաշար է ձևք բերել, վարժուել է կապակցօրէն մի բան պատմելուն: Մեր դպրոցներում այս պահանջներին որոշ չափով չորրորդից Ե. բաժ. փոխադրուող աշակերտը կարողանում է բաւարարել. ըստ իս լաւ կլինի Ե—Զ. բաժանմունքներում աւանդել առայժմ. ձգտել, որ է. բաժանմունք էլ լինի. եթէ դպրոցը միայն Ե. բաժ. ունի շաբաթական դրնէ 4 ժամ յատկացնել, որ նիւթը սպառուի, թեթեւ կրճատումներով, եթէ ունի և Զ. բաժանմունք շաբաթական երեքական ժամ Ե. և Զ. բաժանմունքներում. իսկ է. բաժանմունքում երկուական և անցնել ԺԸ—ԺԹ. դարերը. մի քիչ մանրամասն, ի նկատի ունենալով որ պատմական երևոյթները աւելի բարդանում են ժամանակի ընթացքում և որ գլխաւորն է աւելի ժամանակակից են ու հետաքրքիր: *)

Բարեխիղճ դասատուները կվկայեն, որ այժմեան ծրագրով պատմութիւնը անհասկանալի է մնում երեխաներին, սովորում են անգիր անելով դասագրքի գրածը, բառերի պաշար չունեն, պատմել կապակցած չեն կարողանում, իսկ երևոյթի պատճառը, հետևանքը որոշել ամենեւին չեն կարողանում: Շաբաթական երկու ժամը հնարաւորութիւն չի տալիս դասատուին՝ մշակել դասը և պատմել, աշակերտի գիտեցածը ստուգել, կողմնակի օժանդակ միջոցի դիմել, այն է համապատասխան գրքեր, ոտանաւորներ,

*) Ուշանովը ռուս դպրոցներում սկսում է Բ. բաժանմունքից երկրորդ կիսամեակից, որի հետ համաժայն չեմ մեր դպրոցների նկատմամբ:

լէգենդաներ կարդալ, աշակերտին պատմել տալ: 40—50 աշակերտ ունեցող դասարանում դասարան հազիւ 2—3 հոգու հարցնում է, անցնում է 35—40 բռայէ, իրեն մնում է 5—10 բռայէ. մինչև ինքը պատմում է 5—7 բռայէ անցնում է. առանց նախապատրաստական հարցերի. առանց նկար, քարտէզ ցոյց տալու. ապա կամ զանգն է հնչում կամ 2—3 բռայէ մնում է և դասանուն ստիպուած է ասել կսովորէք այս ինչ բանը. իսկ թէ աշակերտը հասկացաւ, իւրացրեց, թէ ոչ—այդ ստուգելու ժամանակ չկայ: Միւս դասին երևում է, որ շատ բան չեն հասկացել և ուրեմն նորից պիտի բացատրել. իսկ որովհետև եղած դասագրքերն էլ անյարմարութիւններ ունին, դասատուն յաճախ ստիպուած է դասագրքի թերութիւնները շտկել. և ժամանակը թռչում է. իսկ արդիւնքը քիչ, աննշան է:

Այդ իսկ պատճառներով մեր դպրոցներում պատմութիւնը թուերի, անունների, հատուկ սուր դէպքերի ժողովածու է դառնում և աշակերտը միայն իր յիշողութեան ծանրաբեռնումն է զգում և ոչ աւելին:

Եթէ առարկան անցնում են երեխաները պիտի օգուտ ստանան և ոչ ժամավաճառ լինեն, ներկայ ծրագիրը պատմութեան առարկան ժամավաճառութեան է վերածել. որի առաջը պէտք է անպայման առնել. ծրագիրը պէտք է վերաքննել և Հ. պատմութեանը տալ իր պատշաճ տեղը և ժամերի քանակը:

Պատմութեան նիւթի ընտրութեան համար կայ մի այլ դժուարութիւն. այդ մեր պատմութեան շատ խնդիրների լուսաբանուած չլինելն է: Դասատուն կամ դասագիրք կազմողը գրեթէ անել դրութեան մէջ է. մի կողմից ինքն անկարող է նորից ուսումնասիրել. որովհետև այդ տարիների և խմբական աշխատանքի գործ է (էլ չեմ ասում թէ տարրական դպրոցներում աւանդողները թեմականաւարտներ են, որոնք հնարաւորութիւն չունեն այդ անելու, շաբաթական 24—30 դասով, գրաւոր աշխատանքներով ծանրաբեռնուած են և վերջապէս գաւառում աղբիւններ չկան զբաղուելու այդ հարցերով) միւս կողմից մեր պատմութեան վերաբերեալ հայ և օտար լեզուներով եղած ուսումնասիրութիւնները ցրուած են զանազան պարբերականներում, չունինք գրացուցակներ, չունինք մի կենդրոնական մատենադարան. եղած հրատարակութիւնների. ուսումնասիրողը մի տեղեկութիւն ձեռք բերելու համար ստիպուած է ամիսներ չարչարուել, սրան, նրան գրել, խնդրել, որ իրեն յայտնեն այդ:

Իսկ կեանքը, դպրոցը դասագիրք, նիւթ է պահանջում, դըպրոցի ծրագրում Հ. պատմ. է նշանակուած, պէտք է անցնել և ահա բարեխիղճ դասատուն ստիպուած է եօլայ տանել, իսկ անբարե-

խիղճը աշակերտին բթացնել զանազան առասպելներով, թուերով, անուշներով:

Հ. պատմութեան չուսումնասիրուած լինելը, եղած նիւթերի ցուցակներ չունենալը, մի տեղ չկենդրոնացած լինելը պատճառ է դարձել ըստ իս, որ պատմագիտութեան, դպրոցի պահանջին քիչ թէ շատ տեղեակ անձինք դասագիրք չեն կազմում և բնականաբար տուժում է աշակերտը:

Լաւ դասագիրք ունենալուց աւելի մեծ պահանջ է լաւ դասատու ունենալը. իսկ սրա համար հարկաւոր է, որ թեմական դպրոցներում և ճեմարանում Հ. պատմութեան ծրագիրն ու ժամերն ևս բոլորովին փոխուեն. այս հարցը խնդրիցս դուրս է, ուստի զանց եմ առնում: Բայց քանի որ ծխական դպրոցին ուսուցիչ մատակարարողը թեմական դպրոցն է, բնական է, որ թեմական դպրոցից պէտք է սկսել Հ. պատմ. խնդրի կանոնաւորումը պատրաստի, առարկան հասկացող ուսուցիչ ունենալու յաջող դասատուներ ունենալը առաջին կարեւոր խնդիրն է. երկրորդն է յարմար դասագրքի խնդիրը, երկուսից էլ զուրկ է մեր ծխական դպրոցը. այս նշանակում է Հ. պատմութիւնը մեր տարրական դպրոցում աւելի աղաւաղում է երեխայի հոգու աշխարհը, քան կանոնաւորում. Սա մի հրամայական պահանջ է, որը բաւարարելը դպրոցական աշխարհում աշխատողների, դպրոցի արժէքը հասկացողների վրայ է ծանրանում:

(Շարունակելի)

